

դէպք մը կը ծանուցանեն: Անցեալ հինգշաբթի Բոտիօրից տնուն Օսմանեան գրասէսը թիւղանօթակիրը Դանուբի մէջ Նիկիոյօրի տալի կեցած: Այս թիւ գետակին բերանը կանգնեալ Ռուսական մարտկոցները կը ռմբակոծէր, յանկարծ Ռուսաց կողմէ արձակեալ պայթուցիկ ռումբ մը Բոտիօրիցայի տախտակամածին (կէօփէթէ) վրայ ինչպիսի կը զայթի և քանի մը մարդ կ'սպաննէ: Նաւապետն ալ ծանրապէս վիրաւորուելով քանի մը ժամ ետքը կը մեռնի:

Ու ծովու Օսմանեանորմի հրամանատարին կողմէ մայիս 21 թուով առ ծովային գործոյ նախարարութիւնն եկած հեռագիր մը հետեւեալ լուրը կուտայ:

« Զէհիլի բերդին մէջ գտնուող Ռուսերն ասկից վեց օր առաջ Օկիւթայի ամրութեանց մէջ 19 թիւղանօթ թողած էին, տասնէ հինգը պղինձ և չորսն երկաթ: Այս թիւղանօթաց 14-ին վրայ Սուլթան Սպարիկ Մէհմետի թուղան կոխուած ըլլալով, կը հասկըցուի որ Գրքի պատերազմին ժամանակ կարգէն առնուածներն են:

« Այս թիւղանօթներուն ամենն ալ առաջին շոգենատով կ'Պօլիս պիտի ղրկուին: »

Պատերթի խօսքին նայելով՝ Բէօսթէնէն մասնաւոր հեռագիր մը կը ծանուցանէ եղբի թէ անցեալ չորեքշաբթի գիշեր երկու Ռուսական շոգենատ վորձ փորձեր են ծովային ականներու միջոցաւ օգն հանել Օսմանեան Սէմէնարէ և Արքատի պատերազմական շոգենատները, բայց չեն յաջողեր:

Կարսի և Երզրումի կողմէն կարսի ուր մը չկայ:

Թուրք լրագիրքը կը ծանուցանեն թէ Ռուսերը Կարսի առջև մեծ զօրութիւն դուրսբերէ ետե՛ս: Արտահանի պէս զայն ալ ձեռք անցունելու փորձ փորձեր են, բայց չեն յաջողեր: Երեք անգամ իրարու ետեւէ յարձակու՛մ ըրն ու ետ մղուեր են՝ 3-4000 մեքալ ու զիրուսը թողլով:

Թուրք լրագրաց խօսքին նայելով, Հոպարթ փաշային հրաման գընալով ըլլալով որ Օսմանն ռմբակոծէ, նա ալ իւր նաւախուձով վարձայէն ճանապարհ ելեր է:

Սերվիյ մէջ պատերազմական պատրաստութեանց նշաններ տեսնուելով, Սերտար Էքքէմ Սպարիկ Բէնիմ փաշան քանի մը փաշա զօրք և պէտք եղածին չափ ալ թիւղանօթ զրկեր է յԱլաիէ՝ Լիվա Հասան փաշայի հրամանաւրութեամբ:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 1 յունիս:

Յուլիուսը կը շարունակէ Գաղղիոյ մէջ, մինչև իսկ արուեստաւոր դասերուն մէջ:

Փարիզ 2 յունիս:

Փարիզի թագապետական խորհրդին նախագահ Պ. Պօնէ Տիւլէրիէ՝ Մէն-Տընի գումարման մը մէջ ըրած բանախօսութեանը պատճառաւ երէկ իրիկուն լանտարիեցաւ:

Պ. Կամիլէթի Պ. Թիէրի նախագահական ընտրելի ըլլալուն պատահականութիւնը կը խոստանայ ուսանողաց, պատահականութիւն մը, որուն խաղիւս և Գերմանիա նպատակաւոր են:

Հիւսիսային երկաթուղոյն վրայ Քալէ և Ամիանի մէջ տեղը երկու միլիոն ֆրանքի խաղական և եղիպտական արժէթուղի դողդուեցաւ այսօր: Քննուելիս միակտան է:

Աթէնք 2 յունիս:

Երեսփոխանաց ժողովը դռնփակ նշուի մէջ որոշեց որ ամեն կուսակցութիւնը միանան և զինուորական պատրաստութիւնը ամենայն փութով յառաջ տարին: Մեծ քանակութեամբ զէնք և ռազմամթերք ապօրուեցան Եւրոպայէն:

Բեղրադուրկ 3 յունիս:

Կայսրն և զահաժառանգ կայսրորդին երէկ իրիկուն մեկնեցան ի Ռումանիա:

Լահէյ 3 յունիս:

Հօլանտայի թագուհին մեռաւ:

Ալեքսանդրիա 3 յունիս:

Եղիպտական զօրքը ճանաչաւ ելնելու համար Թուրք զրահաւորաց կ'սպասէ, որովհետև Եղիպտական նաւերը կարող չեն պաշտպանել զիրենք Ռուսաց պատերազմիկ նաւերուն դէմ, որը Աքէֆա կը գտնուին հիմա:

Աթէնք 4 յունիս:

Երեսփոխանաց ժողովը ամեն կուսակցութիւններն ի մի ձուլելու կերպիւ նախարարութիւն մը կազմելու որոշումն ընդունեց:

Նիւ-Եօրք 4 յունիս:

Ռուսական Լօրուսթաք անուն պատահաւոր շոգենատն երէկ Սան-Պրանչիսքօէն մեկնեցաւ Էնթուլ հրամաններով:

Եմպրա 4 յունիս:

Օսմ. քօն.	8 1/8
Փոթ.	1863 8 3/8
»	1869 8 1/2
»	1871 31
»	1872 14 1/4
»	1873 8 1/8
» Եղիպտ.	35 7/8
Անգլ. քօն.	94 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ:

Պաթումի կառավարիչ թիւուր փաշան Մալաթիոյ կառավարիչ անուանեցաւ փոխանակ Օսման պէյին՝ որ Պաթումի կառավարիչ անուանեցաւ:

Վեհ. Սուլթանն երէկ Սպարապետի դուռն երթալով զօրահանգէս մ'ըրաւ. յետոյ նախարարաց մէկ արտաքոյ կարգի խորհրդին նախագահելով, իրիկուն ուշ տտեն ելալով քէօշլը վերադարձաւ:

Սթամբուլ լրագրին խօսքին նախելով երկուսից նախարարութեան Միւսթէշար Զիւհաի պէյին յանձնուած պաշտօնն յաջողելու երեւոյթ չունի: 1871-ի փոխառութեան բաժանորդաց ժողովն Օսմ. կառավարութեան բնաւ մէկ ստակ փոխ չը տալու որոշում ըրեր է:

Վեհ. Սուլթանին հրամանաւ շաբաթ օրը կայսերական ախոռներէն հարիւրի չափ ձի վերստին տարուեցաւ Սպարապետի դուռը, և միայն անհրաժեշտ կերպիւ պէտք եղածին չափ ձի մնաց կայսերական ախոռներուն մէջ:

Կըսուի թէ տէրութեան պաշտօնատարներէ և յայցոյ առնուած ձիերուն թիւն 850 ի հասած է:

Զինուորական նախապատրաստական վարժարանին առաջին կարգի աշակերտներէն Սայիա, շէմալ և Նէտիմ էֆէնդիներն՝ որք տէրութեան փնտաւար խորհուրդներ նիւթած ըլլալուն պատճառաւ բանտարկուած էին, վարժարանին տուամարէն ջնջուելով տանն հինգ տարի բերդարգելութեան դատապարտեցան:

Մայրաքաղաքի քաղաքապետութիւնը պատուէր ղրկեց թաղերու միքտարներուն և իմամաց որ իրենց թաղին մէջ ձի ունեցողներուն անունները գրելով քաղաքապետութեան հաղորդեն, որպէս զի եթէ հարկ ըլլայ՝ առնուին:

Շաբաթ գիշեր խումբ մը զինեալ չարաքորձ Գանալիլի Պ. Կլավանիի տունը մտնելով, մէջը գտնուած բոլոր թանկազին նիւթերը կողոպտելէ ետեւ տանալինով ալ ձեռքը համբուրելով մեկնեցան: Ոստիկանութիւնն իմանալով անմիջապէս գողերուն ետեւէն ինկաւ, հասաւ, և անոնց հետ հրազինուց կռուի բռնուելով զինուոր մը մէջքէն վիրաւորեցաւ: Իսկ գողերը փախան:

Զինոյնորմարմութիւն ՈՁ—ՄԱՋԻՆՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱՐՈՑ

Օսմ. երեսփոխանական ժողովոյ չարաթ առուր նստին մէջ, եմետական հաշուեցոյցին քննութեան առթիւ, Պ. Սարաքիթի յոյն երեսփոխանը

զինուորական տուրքը վերցնելու և և զինուորադրութիւնն ընդհանրացնելու առաջարկութիւն ըրաւ, զոր երկար ատենախօսութեամբ մը պաշտպանեց ի դահլութիւն ժողովականաց ամենամեծ մասին: Ժողովը Պ. Սարաքիթի առաջարկութիւնը նկատարութեան տուելով հատուածոց քըննութեան յանձնեց:

Սոյն խնդրոյն վրայ մեր անցեալ երեքշաբթի առուր թուով ըրած ազգասիրական խորհրդածութիւնը Նոր Դար՝ իւր սովորութեան համեմատ չորաչար մեկնելով՝ խեղաթիւրած և մէջէն մինչև իսկ կուսակցական խընդիւր յարուցած է:

Այսպիսի յանդուգն և մանաւանդ կոշտ խորհրդածութեան մը թէև տըլսմարներէ պատ ոչ ոք կրնայ խաբուիլ, բայց մեք նոյն իսկ ակամարներուն ալ եթէ կը գտնուին՝ գաղափարը մոլորութենէ ազատելու համար արժան կը համարին ք յիշեալ խաբէական յօդուածին ստույթիւնները նըշաւակել յաջորդ. թուով:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍՆԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
23 մայիս, երկուշաբթի իրիկուն	9, 4
24 մայիս, երեքշաբթի առաւուս	
բացուեցաւ	9, 6
ժամ 6 1/2 ին	9, 5
Բուլղարի երկաթուղի	Քր. 23
Թղթարաւ	Իր. 180) 20

ԸՆԹԱՅՈՒՆ ԱՐԺԵՊԹՈՑ

Կ. Պօլիս 23 Մայիս	
Ստիւթի ձէնէրալի բաժ. Անգլ. լիւ.	2,25
» փոխանակութեան	1,20
Կ. Պօլիս Պանքային	2,20
Քրէտի ձէնէրալ	1,30
Քրէտի Օսթրո-Թուրք	—
Փոթ. 1863	Ֆր. 45 50
» 1865	» 46
» 1869	» 43
» 1872	» 44 1/2
» 1873	» 42 50
Թրամուայ	Օսմ. լիւ. 1 25

ԸՆԹԱՅՈՒՆ ԴՐԱՄՈՑ

23 Մայիս	
Անգլ. լիւր	109 32
Նաբօնի ոսկի	» 87 30
Իմպերիալ Ռուս	» 19
Գըրմից	» 51 45
Հինգ ֆրանք	» —
Հինգ շոյց	» 117
Պղինձ	» 178

ԱԶԳԱՅԻՆ

Ահաւասիկ ազգային ժողովոյ վերջին նստին մէջ նախաքննիչ դիւտնաց ընտրութեան քուէհամարին արգիւնքը:

Զեանհաստեղան Գեան

Տ. Խորէն արքեպիսոպոս Նար-Պէյ Տ. Եզնիկ Ծ. վարդապետ Ապահոնի Յարութիւն էֆէնդի Մէրիէմբուլի

Դատարանական

Թովհանէս էֆէնդի Նուրեան
Խաչատուր » Միսաքեան
Գէորգ » Ապտուլահան

Համարակալական

Սենեքերիմ էֆէնդի Մանուկեան
Ստեփան » Պէյլիկեան
Ալիքան » Խօրասանեան

Կալուածաց

Թովհանէս էֆէնդի Աղնուրեան
Բարսեղ » Հալաճեան
Ստեփան » Փափաղեան

Գաւառական

Միքայէլ էֆէնդի Մամիկոնեան
Մատթէոս » Ալիքանեան
Նիկողոս » Ալաճաճեան

Խաբարական

Կարապետ էֆէնդի Իւթիւճեան
Պողոս » Պառնասեան
Սիմոն » Յէլէկեան

Իրաստական

Տ. Մատթէոս Եպիսկոպոս
Ալիքան էֆէնդի Պէշիւրեան
Գրիգորիս » Դադարոսեան

Նախահաստեղան

Տիգրան էֆէնդի Եսաոֆեան
Օդան » Խօճատարեան
Գէորգ » Սթիմարաճեան

Գաղափոյ կուսակալին կողմանէ Ազգ. Պատրիարքարան եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գաղափոյ հրաժարեալ առաջնորդ Արիստակէս Եպիսկոպոս 300 տուն Հայ ժողովրդեան հետ բողոքականութեան դարձեր է:

Տարիէ մ'ի վեր Ազգային վարչութեան հրամաններն արհամարհող և իւր կոյտմն ու պարտականութիւնը չյարգող եկեղեցականի մը կրօնախոխութիւնը զարմանք չպատճառեր մեզ: Այլ կը զարմանանք թէ Գաղափոյ Հայ ժողովուրդն ինչպէս այդպիսի պարտադանց կղերականի մը յայտնապէս անարժան ընթացքին կը հաւանի և անոր ետեւէն կերթայ: Այս վերջին իրողութիւնն անհաւատալի կը թուի մեզ, մանաւանդ այս պատճառաւ որ Գաղափոյ քաղաքին մէջ երեք հարիւր տուն Հայ չկայ:

Ահաւասիկ Ազգային ժողովոյ բացման առթիւ Ս. Պատրիարք հօր խօսած ատենաբանութեան պատճէնը:

Տեսաք երեսփոխանք ազգիս Հայոց:

Այս տարի ալ Ազգային ժողովոյ բացման հանդիսի ճառը խօսիլ մեզ վիճակեցաւ, զոր կը կատարեմ ուրախութեամբ:

Գիտէք թէ ինչ տաղնապալից ժամանակի մէջ կապրինք, և թէ այս տարին բոլոր տարիներէ աւելի վշտաց և ցաւոց տարի է: Դուք ալ կը վկայէք թէ մեր Հայրերը մեր պապերն ասանկ դժխմ օրեր տեսած չէին և ասանկ քաղաքական մեծ տաղնապալ մը մէջ գտնուած չունէին, որ ամեն կողմէ երկրին կ'սպառնայ. բայց հաւատք ունիմք Աստուծոյ ողորմութեան վրայ որ ինք պիտի առաջնորդէ մեզ իւր անհուն ողորմութեամբն քիչ ժամանակէ ետեւ ի հանգիստ ելանել և ըսել թէ՛ « Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր և եհան զմեզ ի հանգիստ »:

Ժամանակին երկրի վրայ բերած նեղութիւններէն մեր ազգն ալ ազատ չէր կրնար ըլլալ իբրև այս երկրին ամենապարտէկ տարրն և Օսմանեան բարեխընամ տէրութեան ցաւոց ցաւակից և վշտաց վշտակից մէկ ժողովուրդը. սակայն կրնամ ուրախութեամբ ըսել թէ երկրին այս մեծ ցաւոց մէջ, մանաւանդ վերջին ատեններս դաւառաց մէջ տեղի ունեցած և բազմապատկուած զանազան հարստահարութեանց առաջն առնուելու համար թէ՛ իմ և թէ՛ ինձ հետ գործակից եղող վարչութեան ըրած ջանքերն անյաջող չգտնուելով շատ մը յուսադրական խոստումներ և զօրաւոր հրամանադրեր ընդունած ենք Օսմանեան նախարարութենէն. ասկէց զատ՝ դաւառաց ունեց մէջ տէրութեան օրինաց հախաւակ վարուող այն մեծ ու պղտիկ պաշտօնեաներէն մէկ քանին ալ Աստուծոյ ողորմութեամբ պաշտօնանկ եղան: Անկէ ետեւ քնն եղաւ այնպիսի ժամանակ մ'ալ, ուր իմ հիւանդութիւնս ստատկայաւ և երկու ամիս տուն մնալու և գործէ դադարելու ստիպուեցայ. նոյն միջոցին ալ իմ անստակացաւ, որոյ վասն պարտաւորեցայ գրել և իմացնել Բարձր, Մեծ—Եղաբըստին թէ Հայոց ազգը թէ և ամենէն հաւատարիմ և հնազանդ հայտաւն է տէրութեան. սակայն իւր կրած այնչափ զրկանաց և հարստահարութեանց մասին մեր գրած ամեն խնդիրներն և թաղերիներն և Բ.Գրան զրկած շատ մը հրամանադրերն անգործադրելի մնացին, և բոլոր յոյսերինս սպառեցան, մէկ ճար մը միայն մնաց, այն է երկրին տիրող վեհապետին ոտքը դիմել բողոքել և հոն ձգել նաև իմ Պատրիարքական Իշխանութիւնս: Ասոր վրայ նախարարք ի ժողով գումարեցան և խօսք տուին մեզ կարգադրել մեր ամեն խնդիրները: Նոյն միջոցին Վանայ հրկէհը վրայ եկաւ, որուն

Համար ալ ինչ որ պարտաւորութիւնս էր կատարեցի. նոր բարեխիտ կուսակալ մը դրկուեցաւ հոն, որ լիք չատ խնամք և դարման կրտսնի. այժմ Վանէն ինձ հասած գրութիւնը գոհունակութիւն և վրաստանութիւն կը յայտենէն :

Նմանը չտեսնուած գէպը մ'ալ պատահեցաւ այս տարի. Ներսիսեան տէրութեանց դեսպանը եկան հոս մայրաքաղաքիս մէջ դեսպանաժողով մը կազմեցին և խորհուրդներ ըրին. ես իբր Պատրիարք Հայոց և իբր Ներսիս եպիսկոպոս՝ առանց վարչութեան ժողովներն ինձ հետ պատասխանատու ընելու, բնաւ ետ չկեցայ խօսելէ ինչ որ պէտք էին. նոյն իսկ Օսմանեան տէրութեան շահուցը համար, և այս մասին նախորդը իսկ համոզուեցան, թէ և երբեմն ունենալ թիւ ալ հայեցան ինձ :

Բովանդակ այս խնդիրներով պատուական չկարացի ազգային դատարարական վրայ ունեցած սէրս դարձով և արդեամբ ցուցանել. ես որ կարողացած էի ինձ հետ աջակից դռնուող ազգասէր անձանց հետ մինչև այն ատեն նմանը մեր ազգին մէջ չեղանուէր դարձող մը կանգնել, որուն համար բազումք յորս և Գաղղիոյ կրթութեան պարտօնեայն Պ. Տիրիբի վրկայած են : Աւագ, այն վարժարանը ժամանակիս տաշնապալից ներդրութեան պատճառաւ գոցուեցաւ. Աւաքէլ Շահաբար—Նուպարեան վարժարանն է այն, որ թէ և պարտուց տակ ինկած էր երբեմն, բայց վարժարանին խնամակալութիւնը և իւր վրայ յաւելցած ազգասէր անձինք կարելի եղածին չափ բարիք մատակարարութեան հոգ տանելով ջանաւ հրնար կը լինէին. իսկ փակման պատճառն է միայն արժեթիւղոց անկումը և տոկոսներուն չլճարիլը. այս մասին հարցում եղած էր արդէն ժողովոյդ :

Միւս կողմանէ Աղբ. վարչութեան և Ոստան. խորհրդոյ ջանքերը կեդրոնական վարժարանը շինուեցաւ. Նորհակալութիւն տիւ և գիշեր անձնուիրաբար աշխատողաց, Նորհակալութիւն փոխառու անձանց, սակայն ինչպէս ամենուս ալ բաղձանքն է, ըստ որում այն վարժարանը պարտքով շինուեցաւ, պիտի ջանանք մէկ կողմանէ պարտքերը վճարելով միւս կողմանէ բանալ զայն ժամանակ չանցուցած : Ենթակալութիւն կը յայտնեն որ նաև ինձ աջակից դռնուող Աղբային վարչութեան անդամոց և խորհրդոց : Արեւմտ վստահանելով զձեզ՝ որ չպատահեցաւ գրեթէ օր մը, յորում մեծագոյն մաս չունեցան և չընթերցին անձնուիրութեամբ : Նոյնպէս ամեն խորհուրդ, թէ՛ Ոստան. նական, թէ՛ Տնտեսական, և այլն :

Այսօր մեր ամենէն կարևոր և անհրաժեշտ եղող մահու և կենաց խնդիրը դատարարականութեան խնդիրն է. ձեր մէջ լին իսկ ճառեր խօսող եղան այս մասին. ուրեմն ամեն ճիշդ թափեալը ազգային դատարարականութեան յաւաք տանելու համար : Մինչև ցարդ չ'իջոյցէ տարերաց և նպաստից՝ դիւցազնական ջանքերով զոհողութիւններ ըրած ենք. նոյն ժողովուրդն ենք դարձեալ, պէտք է նոյն ջանքերն իս շարունակենք և կրկնապատկենք դատարարականութեան համար, որ ազգին վերապահութեան միակ միջոցն է. պէտք է որ պատմութիւնն աչքի առնելու ունենալով յիշենք թէ միաբանութեամբ դործեալուն մէջ միայն արդիւնք կրնայ գոյանալ. դարերն ապացուցած են մեր առջեւ թէ միաբանութիւնը կը շինէ և անմիաբանութիւնը կը կործանէ : Ինչու և երկարեմ և չըսեմ. Հրէից ազգն ամեն փամանակէ աւելի ազգասէր եղած ատեն Երուսաղէմի կործանումը վրայ հասաւ, և իրենց ազգերը բազմացաւ ուսուել այն ատեն երբ տիւ և գիշեր բժախնդրութեան ելան, այնպիսի մեծ ազգ մը և Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն ըլլալով հանդերձ. քանզի կուսակցութիւնը բազում նախանշանաւորութեամբ ելեկըր ըզմիմեամբ միայն և իրարու խօսք հասկնալով զիրար կործանել ջանալով ելել իրարէն. կը վախճամ որ մեր ալ այնպէս ըլլանք, քանզի միևնոյն նշանները մեր մէջ ալ կերտան :

Իսրայէլացոց պատմութեան հետ և և հացուց պատմութիւնն ալ կարդացէք, պիտի տեսնէք՝ որ և հայեր ևս միևնոյն

պատճառաւ իրենց ազգութեան ծառին արմատը զօսացուցած և Իսրայէլացոց վիճակին բաղդակից գոհուած են :

Ուրեմն պէտք է ներողամիտ ըլլանք միմեանց. աշխարհիս Փրկիչը սէր քարուղեց, սէր պատուիրեց և սէր կտակեց մեզ. չըլլայ թէ հեռ, նախանձ, ատելութիւն և կիրք մեր արտերու մէջ թագաւորեն, ինչպէս երբեմն այն ազգաց մէջ՝ որք կործանեցան : Խորհրդիւնք, անգութ քննադատութիւնք և անողորմ դատաստանք հեռի՝ ի մէջ, գիտնալով որ սիրոյ սահմանն ընդարձակ է և սէր ծածկէ պաշտօնութիւն մեզաց, ինչպէս կըսէ Սուրբ գիրքը :

Մեր ամեն ուզածն, ամեն գործը չենք կրնար, ինչպէս որ պէտք է, մեր ամեն կարգի պաշտօնեայնեքն անթերի գոհուրաւանք թերութեան մարդ չից, կատարել և ամենաարդին մի միայն Աստուած է. մենք շատ անգամ գաղտնաստաններ կրնենք ձեռնթափ ընել տալու կամ վրահատեցնելու ազգին ծառայողները, վրէտացնելով անուանարկելով և տեսակ մը ահուդ ուղով պաշարելով. քրիստոնեայ ազգի մը չյարմարի այսպիսի ուղով կուսակցութիւն, և մեք ո՞ր ազգին վրայ կը չափենք՝ չեմ գիտեր : Երկու երեք կուսակցութիւն կը տեսնեմ ձեր մէջ. թէ և ամենուն նպատակը բարի և ազգին օգտին նուիրեալ. սակայն ինչու պիտար թշնամանք, զիրար պախարակէք, զիրար նախատէք. ես իբրեւ անարժանութեամբ ձեր Պատրիարքը կըսեմ ձեզ՝ որ իմ հրաժարմանս գլխաւոր պատճառն է ինչ մէկն ալ ձեր այս երկպառակութիւնն է : Ուստի կազաւեմ կը պաղատիմ ամեն մէկերնուդ, վանեցէ՛ք հեռացուցէ՛ք ձեր սրտերն ատելութիւնն, անմիաբանութիւնն, և ներողամիտ եղէք միմեանց : Ասոր հետ մէկտեղ կը խնդրեմ նաև, կրկնապատկեցէ՛ք ձեր աշխատութիւնը ազգին համար և միաբանեցէ՛ք, քանզի շատ փափուկ ժամանակի մէջ կապրինք. վտանգներ պակաս չեն. մինչև անգամ մեր առ Օսմանեան դահն դարաւոր և արևու լուսոյն նման յայտնի և անուրաշխալ հաւատարմութեան մասին միջոցներ ունեցանք, որոնք մենէն առաջ անշնորհ ուղեցին, բայց՝ ինչպէս նախորդ Մեծ Եպարքոս Միտհաթ փառային Պատրիարքարան ըրած այցելութեան միջոցին ըսի, մի միայն մեր Հայոց ազգն է որ անկեղծ սէր և հաւատարմութիւն կը պահէ առ Օսմանեան տէրութիւնն : Զգոյշ կեցէ՛ք մի՛ գուցէ մեր անմիաբանութիւնն օգուտ չաղել կամենան այլ : Ուրեմն գալիքէն պահպանուելու և վտանգի մէջ չիյնալու համար ձեռք ձեռքի տանք, սերտ սիրով կապուինք միմեանց հետ. այս պայմանաւ կրնանք յառաջ երթալ : Յիշեմ չունչ ուղղութիւն ըրէք, սէրն է միայն՝ որ կը մղէ, որ կը սնուցանէ, այնչափ մեծ է սէրն՝ որ Յովհաննէս Աւետարանիչ ըսաւ թէ «Աստուած է նա» ըսել է աստուածամոմտութեան ճանքան իրար սիրելով կ'ստանանք. դարձեալ իրար սիրելով ամեն ազգաց նախանձիկը կըլլանք և մեր անուրի կը հոգալուր ընդ զորոս տիեզերաց. հասկնալու համար թէ մենք այս երկրին ամենին կարևոր մէկ տարրն ենք, սորա քաղաքակրթութեան վաստակակից և յառաջադիմութեան գիտնորն ենք, քանզի աշխարհածանօթ ընելու աշխատեցէ՛ք : Յատուկ Նորհակալութիւն պէտք է յայտնել Օսման և Սերպիէնէն. քիչ նախնեան, որք շատ անգամ մեծապէս օգնեցին ինձ, այլ և մասնաւորապէս Նուրեանէ քիչ նախին, որ մասնաւոր խնդիրներու խնդիրներու մէջ ամեն ջանք և աջակցութիւն չզրացաւ ինձ :

Ենթակալութիւն կը յայտնեմ նաև Օսմանեան խորհրդարանի հայադիւր անդամոց, որք անտարբեր չգտնուելով Վիլայէթի նիւզմանալին մէջ կէս քրիստոնեայ և կէս մահմեդական անդամոց ընտրութեան և տէրութեան գանձին գիմէթ ունեցողները դաւաճաց մէջ ժողովական պաշտօնեայ չըլլալու խնդրոց մէջ՝ որք դաւաճական հարստահարութեանց մեծ ծածկած պատճառներն են, համախոհութեամբ վարուեցան, և ամենայն անաւատութեամբ և բոլոր ազգին պարծանք բերելու չափ պերճախօս ատենարանութիւններով պաշտպանեցին ու յաղորդեցին :

մինչև իսկ նախարարաց գովութեանն որ ժամանալով :

Ենթակալութիւն նաև ձեզ, Տեալք երեսփոխանք, որ անձանձիր վարեցիք ձեր ազգային երեսփոխանական պաշտօնին, կատարելով ձեր կոչման պարտականութիւնները :

Կը վերջանան խօսքս կրկնելով այն բարեմակութիւնն որ ի սկզբան ըրի «աստուծոյն Աստուած անցուցանելով զմեզ ընդ հոգ և ընդ ջուր» հանցէ ի խաղաղ և յանդորր հանգիստ» և վերստին պաշտելով ձեզ՝ որ իրարու հետ սիրով և միտքով մեծապէս վարուիք, կը խնդրեմ Աստուծով որ այս յորդորական խօսքերը չըլլայ թէ ամալի պէս թեթևութեամբ անցնին, այլ Աստուծոյ շնորհին արմատ ձգեն ամենուդ սրտին մէջ :

Հուսկ ապա՝ նկատելով ժամանակիս փափկութիւնը, յորում պատերազմ հրատարակուած է, նկատելով որ մեք հպատակ ժողովուրդ մ'ենք, և այս սրահին մէջ մեր ըրած խօսքերը կրնան այլ ընդ այլոց մեկնուել, կատարելով որ մեր Ազգային ժողովոյ նիստերը ժամանակ մը զադրեցնենք. ձեզ կը խորհրդարանը գաղտնի այս մասին, և եթէ արժան դատեք ընդունել, և եթէ ոչ, դուք գիտեցէ՛ք :

(Մատիւհարութիւն երեսփոխանաց կողմէ) :

Ցաօք սրտի կիմանք թէ Մեծ մոսկի Հայաստանի խմբագիր Մարգարեան Յօհաննէս Էֆէնտիկ որ քանի ամէն ի վեր սնեցած անձնական տկարութիւնը վերջին օրերս ծանրացած էր, երէկ իւր մահկանացու ընթացքը կնքել է ի հասակի կէս ամաց, ի խոր սուգ ընկղմելով իւր ընտանիքն ու զաւակունքը, և մեծ ցաւ պատճառելով իւր բարեկամաց :

Յուզարկաւ որով թիւնն այսօր պիտի կատարի իսկիւտարու Ս. Խաչ կնկղեցին :

Ա Ձ Դ Բ .

1777 Տեղեւորէն Աւագ Սահակեան
1877 Մայիս 29 կիրակի

Հոգ արարծաթեան կողմէ հրատարակուած առաջին ազգայնաց թէ Ազգ. Սահակեան Սահակեան 1777 տարեդարձի հանդէսին համար մատուցած մը կազմուած է, այս անգամ կը փութանք յիշել Մատնաժողովոյ Մեծ. անգամաց անուանքն հրատարակել, որք են՝

Ստեփան Էֆ. ֆափաղեան	»	Խօրատանձեան
Արեւստ	»	Պէյրիկեան
Ստեփան	»	Ֆրէնկեան
Մկրտիչ	»	Սամանեան
Յարութիւն	»	Շահինեան
Յարութիւն	»	Հաճեան
Եղիազար	»	Յովսէփեան
Կարապետ	»	Ֆրանկիւրեան
Գասպար	»	Աշեան
Մկրտիչ	»	Աճեմեան
Միքայէլ	»	Քափաճեան
Կարապետ	»	

Սոյն մատնաժողովն Հոգարարծաթեան հետ միացած յիշեալ հանդէսին համար հարկ եղած պատարասութեանց ձեռնարկով ըլլալով, վրատահ է թէ Մեծարդոյ անձինք կը փութան իրենց ներկայութեամբ պատուել նոյն հանդէսը, որ տեղի պիտի ունենայ այնպիսի յարկի մը մէջ ուր 6000 մօտ խոջալիք զայն իրենց սիրտ փարանք ըրած են :

Հանգիստի տոմարակները կը դադարուն Մատնաժողովոյ Մեծ. անգամաց թու և Մեծ Նորիս հիշատակ. նոյն գրաւանեակը, որոց արժէքն է մէկ քաննոց թղթագրամ :

Հոգարարծաթեան այս երկրորդ յայտարարութեամբ ոչին տեղեկութիւնները ազգով կը յաւելու. նաև թէ Մատնաժողովը իւր մասնաւոր

յայտարարութեամբ հարկ եղած տեղեկութիւններն ալ պիտի հաղորդէ Մեծարդոյ ազգայնաց :

Ի դիմաց Ազգ. Հիշատակ. 1877 մայիս 21 Հոգարարծաթեան Գրաս. Հիւ. Սահակեան Սահակեան

Ա Ձ Դ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Արարատեան ընկերութիւնը պարտ կը համարի իւր շնորհակալութիւնը հրատարակական կերպով յայտնել պատուարժան Արևելեան ընկերութեան որ հաճեցաւ նուիրել մեզ 15 օրինակ Սուրենեան քերականութեան և 25 օրինակ Գաղղիէնէն տպուրէն :

Ընդունեցէ՛ք, տարբ. և մեր անկեղծ երախտագիտութեան այս մէկ նոր հաւատարմութիւն :

Ի դիմաց Արարատեան ընկերութեան Սահակեան Գրամ. ժող. Ա. Արարատեան

Ի Լ Ա Ն

Ասաքիւրի Շահանէ Էլպիսէ անգարնա Տարը Շուրատա մահֆուդ նուսանէսի վէճճիլէ միւսպայեա օրու. նաճաք 750.000 մէթրօ ինկիլմէրանէֆէր չուհասը թարիխը օնթրաթօնըն գըրդ պիրիմի կիւնիմէն իթիւ պարէն պէհէր մահ 1302 թ. պիւնմէթ. րօրը անպարը մէքըրէրէ թէպիմ օլունարաք նիհայէթ քեսանուրի Էլպիլիս 11 ինիսի կիւնիլ թեսանուրի Էլպիլիս 11 ինիսի կիւնիլ արարաթ թէպիլի միւս պէյլէն վերիլէճէք օլան մագպուդ սէնէտլէրիմ թարիլէրիմէն իթիւ պարէն օթուդ պիրէր կիւնի ֆարալալա իթիլէր թագսիտ իլէ վէ սիմ մէճիսիլէ 20 զըշ հիսապը իլէ վէ շայեա սիմ մէճիսիլէ վերիլմէքսէ ագճէնիլ վերիլիլի կիւնի ֆիեապա մուհիլիս. ճէ պիլ հիսապ ֆարքը իլէ պէրապէր դայիմէ օլարաք նիդամիլէ խաղիմէ սիստէն վերիլմէք շարիլմէք պէհէր մէթրօք 31 զըշ օլարաք թարիլի Էօհէսիմէն օլուպ հաղիրները ռումի. նին 1 ինիսի չէհարշէնպիլի կիւնիլ. դալարը գաթիլի վերիլմէճէյիսիլէ, ի թա իթմէյէ թալիպ օլանարըն եէվի մէքըրէրէ Տարի Շուրայի ասքըրիլէ կէլմէյէրի :

23 մայիս 1877 Պապը Սէրասքէրի

Ասաքիւրի Շահանէ Էլպիսէ անգարնա գըրդ պին թօփտան 50 պին թօփա դատար մահֆուդ նուսանէսի վէճճիլէ միւսպայեա օրու. նաճաք իսկիւ միւս վէ Գաղղիան ազատը թարիլիլի օնթրաթօն իթիլարէն ալթը այտա մահ պէ մահ իտապէթ իտէն մըքստարը թէպիլիլ իլէ արգասը ալունմագ վէ պահասը մագպուդ սէնէտլէրի վիւրուսիմէ սիմ մէճիսիլէ 20 զըշ վէ մէճիսիլէ վերիլմէսիլի հայտէ ֆիեապա ֆիլպիլ իլէ պիլ հիսապ ֆարքը իլէ պէրապէր դայիմէ օլարաք պէր վէճէր փէշին իթիւ գըլլմագ շարիլ իլէ պէհէր արըլըն եէտի զըշ 15 ֆարապա օլարաք թարիլիլ Էօհէսիմէն օլուպ մայիլը ռումիլէ 26 ինիսի փէնէ. չէպիլի կիւնիլ դարարը գաթիլի վէրիլմէճէյիմէն, ի թա իթմէյէ թալիպ օլանարըն եէվի մէքըրէրէ Տարի Շուրայի ասքըրիլէ կէլմէյէրի :

23 մայիս 1877 Պապը Սէրասքէրի

Թէլ գօփճա, քեսալըտ 12000, պէհէր քեսալըտ եանի 1000 յիթիլի 8 զուրուշ :

Քէմիլ փուր մաչա 5000, պէհէր մաչալը եանի 1000 ատէտի 12 1/2 զըշ. Օլթան իլիլիլի գըլէ 4000, պէհէր զըլէսի 20 զրուշ :

2	Իւսկ . Գուգի . Պէյլէլ . Ձէնկէք . Վանիք . Գանիւրի, 25
	Ա . Հիսար, Գանիւ . Բաշասպ . Պէյթօզ :
	(Ուրբաթ օրերը Բ . Ժաշա մասն .)
2 15	Աւգիստի Վանիքէօյ : 22
4	Պէյլիկ . Ուրթաք . Պէյլ . Ձէնկ . Արնիկ . Դանտ . Պէյպէկ : 6
9 45	Գուգի . Պէյլ . Ձէնկ . Վանիքէօյ : 25
10 30	Գուգի Պէյլ . Ձէնկ . Վանիք . Գանտ . Ա . Հիսար , 33
	Գանիւ . Բ . Ժաշա մասն . Բաշ . Պէյթօզ , Քիլիճ , Պէյյիքտա .
14 15	Գուգի . Պէյլ . Ձէնկ . Վանիք . Ա . Հիսար , Գանիւ . 24
	Բաշասպ . Պէյթօզ :
14 40	Գուպաթ . Գուգի . Պէյլ . Ձէնկ . Վանիք . 4
	(Պէյպէկ Պաշնէ Իսկէյնիս պիտի մնայ) :

CURTIS ET BROWN
NEW YORK

[illegible]